

Հայրենեաց



ՄԵԿԱՆԻԿԱԿ
AN ARMENIAN WEEKLY.
16 MECHANIC STREET,
WORCESTER, MASS.

ՀԱՍՏԷ
AMERICAN HAI PUBLISHING Co
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at
Worcester, as Second-Class
Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ՇԱՐԱԲԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏՈՒՈՅ ԱՍՏԱՆ
ԵՒ

ԴՐՕՇԱԿԻ ՅԱԻՆԵՆՈՒՄԸ

Պ. Պ. Յակոբեանի և Իսախանյանի ընդհանուր Պատուոյ Ատենի մը կազմութեանն համար՝ այնչափ անկեղծօրէն և լուրջ խորհրդածութեամբ գործած, երբ կարգացինք մեծ շունջ մ'առինք խորհելով թէ՛ ամէն ազգային պիտի ընդգրկէ՛ այդ գաղափարն և փութով կազմէ՛ այդ ատենանք. բայց շուտով յուսախար եղանք երբ յաջորդաբար կարգացինք այդ ազնիւ ու բարձր գաղափարին դէմ յարուցած խժժանքներն ու քաշկուտութիւնն Դաշնակցական կողմանէ՛:

Անշուշտ ես յաւանութիւն չունիմ կարծելու թէ՛ իմ տկար ձայնս կրնայ լսելի ըլլալ այդ անձանց քով որոնք կար համարձեան Պ. Պ. Յակոբեանի և Իսախանյանի նման յարգելի ու հանրածանօթ ձայնն, ու մինչեւ իսկ յառաջ կրթման կողմնակցական գրօք մը տալ անոր. սակայն կը խորհիմ թէ՛ ամէն ազգային պարտական է իւր կարծիքն ու գաղափարը յայտնել այս խնդրոյն վրայօք եւ ըստ կարի աշխատիլ այդ առաջարկի իրազորմանը:

Նախ պարտիմ ըսել թէ՛ ես ոչ մէկ կուսակցութեան կը վերաբերիմ, ինձ համար Հնչակեան և Դաշնակցական հաւատարմութիւն յարգելի են այս ինչ գործերուն համար և հաւատարմութիւնս դատարարութիւն այն ինչ անխոհեմ վարմանց և սխալներուն համար. եթէ Դաշնակցականներու մէջ գտնուած են հերոսներ նոյնը պակաս եղած չէ նաև Հնչակեաններուն մէջ. եթէ անխոստովանելի արարքներ կատարուած են Հնչակեաններու մէջ, Դաշնակցականները անոնցմէ պակաս գտնուած չեն. բայց իմ դիտաւորութիւնս չէ՛ քննադատել այդ երկու կուսակցութեանց գործերն՝ ասիկա շատ երկար կը լինի ու շատ հնաու կը տանի մեր նպատակէն: Իմ՝ և ինձ հետ ամէն ան կեղծ ու անաշուտ անձերու միակ փափաքն է տեսնալ ճշմարտութեան և արդարութեան յաղթանակը:

Այսօր անձ մը կայ մէջ տեղ անունը կիրակոս է եղբի թէ՛ Մարտիրոս, Հնչակեան թէ՛ Դաշնակցական տարբերութիւն չնեւ բնաւ, որ կամբաստանուի իբրեւ մատնիչ, դաւաճան ու խորհրդաւանող իւր ազգին դէմ. հետևապէս նորա դատարարութիւնն ու պատիժը ազգը միայն կարող է վճռել և որովհետև բացարձակապէս անհնար է ամբողջ հայութեան ասանին ներկայացնել այդ պատն, կը մնայ արտասահմանի հայոց վրայ այդ պարտականութիւնը կատարելու գործն: «Դաշնակցական կօմիտէ», մը բնաւ իրաւունք չունի Ազգին իրմունքը կապտելու եւ իւր տուած վճիռն իբրեւ օրինաւոր ու արդար ներկայացնելու. Դաշնակցականը կրնան ներկայանալ իբրև՝ ամբաստանող

և իբրեւ վկայ՝ այլ ոչ երբէք վճիռ արձակող ու դատաւարտող: Ժողովուրդի ազատութեան և իրաւունքին համար կը՝ ուսուց մարմին մը ամենէ առաջ ինք պէտք է յարգէ ամէն մէկ անհատի ազատութիւնն ու իրաւունքը, նա մանաւանդ ազգի մը իրաւունքն: Այդ մարմինը յեղափոխական անունը կրելով, երբէք չը կրնար արդարանալ քմածին վը ճիւղներ կրճակելու և ամբողջ ազգը հըրաւիրելու որ ընդունի զայն օրինաւոր և արդար: Ձոր ինչ գրեցի գրեցի ինչ գրեցի անցած է: Յորչափ այդ ամբաստանութիւններն անկողնակալ ու արդարադատ ատենի մը առջեւ չէ՛ հաստատուած ու վաւերացած, անոնք միշտ պիտի մնան տարակոյսի ներքեւ ու զըրպարտութեան կնիքով դրօշմաւած:

Միւս կողմանէ Արփիարն ալ եթէ կ'ըլլայ թերթերու մէջ գրէ ու յայտարարէ թէ՛՝ սուտ են, զըրպարտութիւն են, կեղծարարութիւն են այդ ամբաստանութիւններն, դարձեալ չ'կրնար արդարանալ՝ մինչեւ հանրութեան համարումը վայելող անձինք չը վկայեն ու չը վաւերացունեն իր ըսածները:

Եւ որովհետև «Այս այսպէս է — չէ՛ այդպէս չէ՛» ես այսպէս ըսի նա այնպէս ըսաւ ներուճ վերջը չի գար ու տարիներ պիտի տեէ, ամենէն կտրուկ, ամենէն բանաւոր ու ամենէն արդար միջոցն է Պ. Պ. Յակոբեանի և Իսախանյանի առաջարկած Պատուոյ Ատենի կազմութիւնն, եթէ նոյն իսկ տարի մը ժամանակ առնէ Հայրենիք լրագրոյ ներկայացուցած երկարատեւութիւնը հաշիւին նայելով, դարձեալ երկար ժամանակ մը չէ՛ այնպիսի խնդրոյ մը ամենք որ առնուազն չորս տարի է ի վեր կը քաշկուտուի ու հանրութիւնը կը կրէ անոր փնտն ուղղակի կերպով, թողունք այն ահազին փնտն որ երկու կուսակցութիւններն ալ կը կրնն հաւատարմութիւնս:

Այնպէս կը հաւատայինք թէ՛ այդ գաղափարին, պատուոյ ատենի կազմութեանն ամենէն շիւրջ պաշտպան ու ջանադիր պիտի ըլլային նոյն իսկ Դաշնակցականք և ահա ամենէն կատարի հակառակորդներն անոնք կը դառնան. ինչն է՝ — որոշ պատասխան մը չ'կայ այդ ինչուն, այլ պատի պատ քաշկուտութիւնն որոցմէ սա եզրակացութեան կը յանգինք թէ՛՝ Արփիար արդէն դատարարութեան ըլլալով Դաշնակցականներէն ալ զրկուած է մարդկային ու ընկերական ամէն իրաւունքէ և թէ՛ անպատուութիւն է իրենց դատի մտնալ իրենցմէ դատարարութեան անձի մը հետ: Բուն խնդիրը հոս է արդէն, հայ ժողովուրդը կուզէ՛ գիտնալ և համոզուիլ թէ՛՝ Դաշնակցականաց վճիռն ու դատարարութեան ճշմարտութեան և արդարութեան վրայ հիմնուած է թէ՛, սխալմունքի կամ թշնամական զըրպարտութեանց օ

Այդ ընդարձակ յաւելուածին մէջ կան շատ մը արարկուսելի ու կասկածելի մասեր և անընդունելի վկայութիւններ որոց վրայ աւելնալով Դաշնակցականաց հակառակութիւնն պատուոյ ատենին կազմութեանը՝ աւելի իրաւունք կուտայ կազմի ենթարկելու այդ ամբաստանութիւններու ճշմարտութիւնն: Ի՞նչ հարկ փախուստ տալու և պահանջելու որ Արփիար Ելլայ լրագրաց մէջ հրատարակու հերքէ գտնուք. ատիկայ դարձան է միթէ՛ այս կնճառտ խնդրոյն, ո՞չ ապա քէն հերքումին հերքումը անվերջանալի կերպով պիտի կրկնուի ու շարունակուի: Արփիար մեղաւոր չը կրնար համարուիլ իր լուսթեանն համար, մանաւանդ երբ Հնչակեան կուսակցութիւնն յայտարարեց «Ամենամեծ խստութեամբ և անաշուտութեամբ կատարել իր պարտականութիւնը»: Դաշնակցականք իրենց յայտարարութեանն ենք քարի վերջ հըրպարակ հանցելն այդ օքրիմաններու օրինակներն, անիրաւութիւն է եթէ Հընչակեանք կամ Արփիար անմիջապէս պատասխանելու չեն կ'ըլլար:

Դաշնակցականք՝ իրր արդարացուցում պատուոյ ատենի պէտք չը լինելուն, մէջ կը քշեն յաւելուածի սա յայտարարութիւնը թէ՛՝ իրենք պատրաստ են հայորդել ամէն վստահելի հայու այդ վկայութեան անունները և շատ պարագաներու * մէջ վկայներու ձեռագրերը կը փոխադրէ իսկ զիտնալ թէ՛ այդ ներկայանալ ու զող անձինք որո՞ւ կամ որո՞ց վկայութեանն վստահելի պիտի ճանչցուին. Բ. թէ՛՝ Դաշնակցականք սկսած են ընդունիլ արդեօք թէ՛ իրենցմէ չեղող և իրենց ուղղութեան չը հաւանող հայերու մէջ կը գտնուին վստահելի անձինք. ես որչափ որ գիտեմ այդպիսիները համարուած են թրքաւորներ, ազգատեացներ, անտարբերներ, անձնտեսներ եւ շատ շատ Հնչակեաններու կուսակցներ. Դաշնակցականք չեն զգար արդեօք թէ՛՝ այդ հրաւերն անդորձաբերի ու ապարդիւն պիտի մնայ. աւելի դիւրին և գործնական չէ՛ պաշտօնապէս ընտրուած 4-5 վստահելի անձերու ներկայացուցելու քան անպաշտօն կերպով 4-500 անհատներու որոյ արդիւնքը գրեթէ նոյնը պիտի ըլլայ ինչ որ է ներկայ վիճակը:

Ըստ իս Դաշնակցականք փոխանակ վկայներու այդչափ երկար շարք մը ներկայացնելու որոց մէջ պակաս չեն մատնիչներն և մէկ ատարի համար Ազգ եւ Հայրենիք ծախող դաւաճաններն, Լաւազոյն կը լինէր արժանահաւատ ու համոզող վկայութիւն մը միայն ձեռք բերել, այն է Տօք. Թիւրքաբեանի ստորագրութեամբ երկու տող մը որով յայտարարելի թէ՛՝ ինք համոզուած է ու

* Ինչո՞ւ ամէն պարագայի մէջ չըլլայ երբ արդէն վստահելի են:

իր խղճովը կը վկայէ թէ՛ Ա. Արփիարեան մատնիչ մ'է՛ս. այս վկայութիւնն Դաշնակցականաց բոլոր օքրիմաններէն աւելի մեծ արժէք ունին իմ քովս և կը հաւատամ թէ՛ շատ հայերու քովս էլ եթէ ոչ ամենուն:

Արդ որ կողմ ալ որ դառնամք նոյն եզրակացութեան կը յանգիմք թէ՛՝ անհրաժեշտ է պատուոյ ատենի մը կազմութիւնն պարկեշտ և վստահելի անձերէ որոնք դիւրաւ կարող պիտի ըլլան ձեռք բերել արժանահաւատ անձինքներու վկայութիւնն և իւրեանց համոզման ու խղճին համեմատ արձակել մեղաւորին վճիռն ու դատարարութիւնը. կը փութամ ըսել նաև թէ՛՝ որչափ ալ ցաւալի ու դառն ըլլայ Արփիարի նման կարող հրատարակազիր ու զրազէտ մը դատարարութեան տեսնալ՝ այդչափ սեւ ու աղտոտ ոճիրով մը դարձեալ ուրախ պիտի ըլլամք այդ անհատին կորուստովը քան, տեսնալ ամբողջ կազմակերպութիւն մը զըրպարտչի ու անարդար վճիռ արձակողի գերին մէջ. կը հաւատամ թէ՛ ինձ հետ ամէն անկեղծ ազգասէրի փափաքն է այդ:

Յ. Մ. ՆՇԿԻԱՆ

Մեր գործակալներուն մեզի տալիք ձեռնտուութիւնը դրամի կանոնաւոր առաքման մէջ է ըսինք. կը խնդրենք որ այդ տարրական աջակցութիւնը չ'ըլլանա և հաճին քովերինն եղած հաշիւը անմիջապէս յղել առ մեզ:

Մեր դրացի թերթին մէջ հրատարակուածներու դէմ շարք մը հերքումները յաջորդիւ, և կը յուսանք այլևս չ'ըրադիւ մեր այդ գրկիցով:

Տեղի անձկութեան պատճառաւ կըրկին յաջորդ թերթին մնացին մեր շարունակելի առաջնորդողը, կարեւոր նամակներ և յայտարարութիւններ, որոց ըստպատշաճութեան ներողութիւնը կը խընդրենք:

ՉԻՆԱՍՍԱՆ

Չինաստանի մէջ ժամանակէ մը ի վեր ամէն կողմ գաղտնի ընկերութիւն մը կազմուած էր «Պօքսեր», անունով. որը կայսրուհիին ուղղակի հրահանգին ու հովանաւորութեան տակ կը նկատուի Այդ «Պօքսեր», ներու նպատակն է հաւածանք օտարականներու և միսթոնարութեանց դէմ. զանոնք սպաննել և անոնց տունները թալանել և հրդեհել. Ասոնք քանի մը շաբաթներէ ի վեր է որ գործի սկսեցին. ամէն կողմ կը սպանանեն ու կը հրդեհեն. Եւրոպական մարտանաւերէն նաւաստիններ ցամաք ելած՝ յառաջ կը խաղան իրենց հպատակներուն պաշտպանութեան հասնելու, և Չինական կառավարութիւնը այդ խռովայնութիւնը դէմ արքունի բանակներ կը զրկէ. որոց մէկ մասը կը փախչի ու միւս մասը կը միանայ խռովարարներուն:

Կացութիւնը խիստ ծանր է:

ԿԻՒԿԻՈՅ ԿԱՌՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Կ ՊՈՒՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԻՍՏՈՒԹԻՒՆԸ
ՊԱՏՐԻԱՐԻՍՏՈՒԹԻՒՆ
Ներկայ Պատրիարքական տաճարային
առթիւ:
(Շարունակութիւն 37 թուէն)
Գ.

Դիտմամբ Հոս՝ ձգեցինք յիշելու
նրինման Հայրիկի Պատրիարքութեան
ժամանակ 1871 ին՝ Երես. Ընդհ. ժողովին
մէկ ուրիշ քուէարկած օրէնքն
ալ՝ Կիրիկոյ Կաթողիկոսներու նկատմամբ
այդ օրէնքն է, որ Կիրիկոյ Կաթողիկոս
մը ընտրուելէն անմիջապէս վերջ՝
օծուելէն առաջ պարտաւոր է ախտա-
գիր մը ատորագրել, խոտանալով Ամեն-
Հայոց Հայրապետութեան իրաւասու-
թիւնը ճանաչել և Կ. Պոլսոյ կեդ. վար-
որդու մեները գործադրել, իրեն անոր են-
թակայ:

Արդ ինչպէս յիշեցինք՝ Մարաշցի
Մկրտիչ Եպիսկոպոս ընտրուեցաւ Կիրի-
կոյ Կաթողիկոս, օրինաւորապէս:

Սակայն անոր Երեսօրհանական ժո-
ղովէ վաւերացումը բանադրուի եղած է
իր Գործադիր տեսուչ՝ զբաւած Սի-
մէօն Եպ. Սէֆէրեանի ստիպողական հե-
ռագիրներուն վրայ, որով զօգրեցն կեան-
քին մէջ Կաթողիկոս մ'ալ օծելու բաղ-
դին կուզէր արժանանալ(՝ Այնպէս որ
նոյն իսկ երբ Երես. ժողովը հեռագրով
կը պահանջէ որ նախ խոտանալով ըս-
տորագրել տայ Մկրտիչ Եպիսկոպոսին,
Գործադիր տեսուչ Սրբազանը հետեւ-
եալ լակոնական պատասխանը կը հեռա-
գրէր, «Մկրտիչ Սրբազան յանձնէր է ի-
րեն՝ վարչութեան անուան պէտք եղած
խոտանումը», և Երես. ժողովը այս հե-
ռագրին վրայ բաւական վիճելէ յետոյ՝
վերջապէս վտտանելով անոր ճշտութեա
նը ընտրութիւնը կը վաւերացնէ 1871
նոյ 12:

Արդ Մարաշցի Մկրտիչ Կաթողիկո-
սի տուած ուխտագրի պաշտօնական խոտ-
քերն էին, «Սոյն ամենամանր և փոփոխ
պաշտօնը վարելու եղանակին մէջ, ինչ-
պէս Ս. Էջմիածնայ Կաթողիկոսը և Ս.
Երուսաղիմի Պատրիարքը, նոյնպէս նու-
աստս ալ Ազգային Կեդր. Ընդհանուր
ժողովոյ՝ յօգուտ Մեծի Աթոռոյս Կիրի-
կոյ և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ,
ըրած որոշումները յարգել կը խոտանով
նիստ», (1871 նոյ 8 Առանայ):

(Ս. Մկրտիչ Եպիսկոպոս Ս. Երու-
սողէ մը և Բերկոյ Համայն Կիճակացն):
Ընթերցողը կը տեսնէ թէ որքան
երկրիմի և կասկածելի բացատրութիւն
ներ են և կեդր. վարչութիւնը տեսնելով
զայն, ինքզինքը պարզապէս խարուած
զգաց Սիմէօն Եպ. էն:

Միւս կողմէ Տ. Գեորգ Կաթողիկո-
սին ալ, որ նախ խոտանութիւն Համարի
էր 1871 Գեկ. 15 թուականը Կոնդակով
չնորհաւորել անոր պաշտօնը և յիշեցնել
անոր ուխտը առ Ընդհ. Հայրապետու-
թիւն և առ Էջմիածին, * և սակայն սը-
գեղ տոմսակ մը ստացեր էր իր պատաս-
խան, զայրացած և իր Համոզումը եղած
տեսակետով՝ «Հակաթոռ», նկատելով Սի-
ոսի և Աղթամարայ Կաթողիկոսութիւն-
ները, յանդիմանագիր մը կը զրկէ Սը-
րիմեան Պատրիարքին և Կեդր. վարչու-
թեան և չուզեր բնաւ ճանաչել այդպի-
սի ընտրութեան մը գոյութիւնը:

Այսպիսով և Մարաշցի Մկրտիչ Կա-
թողիկոսին ուրիշ շատ մը քովին գոր-
ծերով՝ ինքիւր ծանրացաւ և Պատրի-
արքարանի ու Կիրիկոյ միջև քանի մը
տարիներ քանակացութիւնները չը դադ-
րեցաւ:

Հայկական խնդրին նոր բացուած
ժամանակն էր. Կեդր. վարչութիւնը
գաւառական Հարստահարութեանց տե-
ղեկագիրներով և Բ. Դրան և ձեռքի տա-

* Մարաշցի Մկրտիչ Եպ. ձեռնադը-
րուած է Էջմիածին, ուր ըստ օրինի Հայ
տակութեան երդում ալ ըրեր է: Այլ վե-
րի ստորագրութեան կերպի թէ այդ
երդումն ալ արժէք չունէր իրեն Համար
զի երուսաղէ մը «Միտան» էր և ոչ թէ
Եպիսկոպոս:

կէ դեպքանց մատուցած խնդրագրի-
րով կ'զբաղէր: Օրուան այդ կարեւո-
րագոյն խնդիրները Կիրիկոյ գործը դան-
դաղեցուցին. մինչև և նրինման Հրատա-
րեցաւ (1873 Նոյ. 2) և Ներսէս Պատրի-
արք ընտրուեցաւ (1874 Ապր. 14): Նոր
Պատրիարքը կարուկ ընթացք կ'ընէ և
ուղղութեան կը հրաւիրէ զանի:

Մկրտիչ, յամուսնայ անգամ իր ճշօր-
ծին ծրագրերը կը փոխէ և աւելի վտան-
գաւոր ուղղութեամբ՝ Բ. Դրան օգնու-
թեամբ կ'սկսէ գործել, ուստի Կ. Պոլսո
կուզայ 1880 ի վերջերք: Մկրտիչ մի
կողմանէ Կեդրոնական վարչութիւնը
կօրօրէ էր խոտանումնում, իսկ միւս կող-
մէ Բ. Դրան հեպ կը կազմէ այն ուղ-
ղութիւնը և այն քաղաքականութիւնը
զոր այսօր կը ջանան գործադրել Օրման-
եան Պատրիարքի թուլութեան օգուտե-
րով. այսինքն է Կիրիկոսի բաժնել Կ.
Պոլսոյ Պատրիարքութեան, անկախ ան-
կէց՝ ուղղակի Բ. Դրան Հետ յարեալու-
թեան միւս առաջնորդներէ բոլորովին
տարբեր և բացարձակ կերպով կապու-
ած աշխատի որ ապագային կարենար
կառավարութեան ձեռքը գործել ինչն՝
նոյն իսկ Հայոց Ընդհանրական Կաթո-
ղիկոսութեան (Էջմիածնէն) բաժնելու
Տաճկաստանը և հետեւաբար Տաճկահայ-
րը Բուս կառավարութեան ազդեցնթիւն
նէն: Հոս կ'այտէ քիչ մը շեշտել թէ
խնդիրը նաև Բուսաթիւրքական զբաւա-
գրութեան հետ կապ ունէր. Բ. Դրանը
սիրտը տարած Արեւելեան պատերազմի
մէջ Հայկական սահմանադրութեան
վրայ և անկից վերջ՝ Դաշնագրերու մէջ
Հայոց կատարած դերէն, ապագայ պա-
տահանութեանց Համար կարեւոր գոր-
ծիք մը կուզէր պատրաստել Կիրիկոյ
Կաթողիկոսութեամբ: Գաղիացի նշանա-
ւոր Մատենադար մը իր 1889 ին Բարիզ
Հրատարակած «Չարբու կայսրութիւնը
և Բուսները» անուն գործին Գ. Հատարի
Բ. գլխուն մէջ՝ Բուսա-Հայոց վրայ խո-
սելով՝ (էջ 584-588) կ'ըսուցնէ թէ Էջմի-
ածնայ Կաթողիկոսութիւնը ինչ մի՞
կարեւորութիւն ունի Բուսիոյ Համար,
Տաճկա-Հայոց ալ նկատմամբ: Բնականա-
բար Բուսիոյն եկող այդ ազդեցու-
թիւնը Տաճկական կառավարութեան վը-
նակար էր և այդ կէտը գուցէ Մարաշ-
ցի Մկրտիչ Կաթողիչ ուր վարպետ դա-
ւերուն նախնական յաջողութեան պատ-
ճառ եղաւ: Վասն զի յիտաի Կիրիկոյ
աթոռակալը կրցաւ Անկախութեան Հը-
րովարակ մը կորցնել Բ. Դրանէ, (1881,
Յուլ. 20 թուականաւ պէրաթ): Ներսէս
Պատրիարքը, վարչութիւն, ժողովուրդ
իրար կանցին: Բողոք, յանդիմանու-
թիւն, նոյն իսկ Կիրիկոսներուն կողմէ
գժգոհութեան Հանրագիր. — մինչև որ
Ներսէս կը յաջողի խել Մկրտիչի ձեռ-
քէն նոր Պէրաթը և ուրիշ պերաթ մը
առնել կառավարութեան, հին գրու-
թեամբ նման գաւառային առաջնորդաց
պերաթներուն:

Սակայն, սերմը ցանուած էր, այլ ևս
թոյնը պատուատուած էր, և այսօր՝
այդ ամենը ևս Հասկցող Սրբանանի
կրօնը կը պայթի, և ինքը... այլ ևս չը
կրցաւ դիմանալ այդ ուժանդարական
կործանման: Մինչև ևս ի վերջին մը
կրցաւ դիմանալ նմանօրինակ դաւերու,
և Ազգային Սահմանադրութեան 1871 ի
Օրէնքին կէտ առ կէտ գործադրութեամբ
ընտրել և վաւերացնել տալ Գեր. Ալէ-
սաթճեանը (1895 Յուլիոյ 7): Օրմանեանի
առաջին Սահմանադրական սխալը այն
եղաւ որ, թողոք արդէն ժամանակը ը-
րացած և կազմաւորուած իսկոն ժողո-
վի մը՝ բեկանել այդ Կաթողիկոսական
ընտրութիւնը, որ վաւերացուած էր Սահ-
մանադրական բարձրագոյն մարմինէն,
Երես. ժողովէն: Ինքը Օրմանեանէն էր որ
մեզ՝ Դպրեմանքի անդրանիկ ընթացա-
ւարտ եօթն վարչապետներս՝ Իզմիրեան
Պատրիարքին ներկայացնելէ վերջ՝ Սկիւ-
տար առաջնորդէ և ներկայացուց Կիրի-
կոյ նորնոր Կաթողիկոս Ալէսաթճեան
Սրբազանին՝ շնորհաւորելով «Եկեղեցւոյ
և Սահմանադրութեան յաղթական ընտ-
րութիւնը»:

Հոս չ'մոռանք յիշելու Գեորգ Դ.
Կաթողիկոսի մահուամբ՝ ընդհանուր
Հայրապետութեան և Կիրիկոյ Կաթո-

ղիկոսի (նաև Աղթամարինը) միջև եղած
Հակառակութիւնները վերցան: Մակար
Կաթողիկոս նոյն իսկ սկսաւ յարաբե-
րութիւն մշակել անոնց հետ առջի օրէն.
իր մէկ Կոնդակին մէջ (1888 Գեկ. 8 թիւ
471) ամենէն առաջ կ'ընէ «Երջանկա-
զարդ Կաթողիկոսաց Տանն Կիրիկոյ և
Աղթամարոյ»:

Մկրտիչ Մարաշցին՝ այդպէս մինչև
իր վաղճանը, շատ սղոմուկ չհանց այլ
ևս: Իսկ Ալէսաթճեան Եպիսկոպոսի ընտ-
րութիւնով հին Հակառակութիւնները
բոլորովին փակուելէ զաս՝ Ընդհանրա-
կան Հայրապետութեան կեդրոնական
վաւարանին հետ կապերը միանգամ ընդ
միշտ ամրապնդուի կ'յուսուցուէր. դըժ-
բաղք հանգուցեալին հետրած անօթ աղ-
գային նախանձանդութեան շնորհիւ:
«Հակաթոռ» չ'ի Աղթամարի և Սի-
սի «Մատենար» և «Փոքր», Կաթողիկո-
սութիւնները. այլև անոնց գոյութիւնը
Պէտք մըն է իրենց վիճակներուն Համար
Բայց Ամենայն Հայոց Կաթողիկոսու-
թեան չ'ը պիտի, արդէն շատ փշուտէ
իր դիրքը:

— 1441 ին Համալգային ժողովը Հայ-
րապետական Աթոռը Կիրիկոսին փոխա-
դրեց, վաճառի այլևս դադարած էր Բու-
սիւնեաց իշխանութիւնը: Հայրապետու-
կան Աթոռը միշտ տեղափոխուած է քա-
ղաքական համեմատապէս աւելի խո-
ղաղ և ազատ Հորիզոններու մէջ թերե-
ւս ապագային էջմիածնէ փոխադրե-
լու պէտք տեսնուի, անկէց աւելի ա-
զատ Հայկական երկիր մը, բայց Համալ-
գային ժողովի մը որոշմամբ, ո՛չ թէ
սիրող բնականութեանց դաւերով:

Տաճկական կառավարութեան որոշ
նպատակն է Բուսա-Հայոց և Տաճկա-Հա-
յոց յարաբերութիւնները կտրել: Իր բե-
րանը շատ դաւանացած է Հայրիկ-Իզմիր-
եան-Ալէսաթճեան երեք յաղթական ընտ-
րութիւններէն: Կուզէ այժմ Կիրիկոյ
Աթոռին վրայ Պոլսոյ Պատրիարքարանէն
անկախ և աւանդուէր մանիշակագոյն վե-
ղար մը դնել, որպէս ի վերջոյն, երբ
հարկ լինի էջմիածնի պատգամաւոր
ներ զրկել: Ընդհանրական Հայրապետ
մը ընտրելու Համար, ցոյց տայ զանի, ըսե-
լով՝ «Կա՛ս անը Կաթողիկոսը, կուզէք
ըրեմ Պոլսո նստեցնեմ, Հայ-Կաթողիկոս
րու Կաթողիկոսին պէս»:

Այս վտանգը, և թէ Բուս կառավա-
րութեանը իր ձեռնարկ թաթը Բ. Դրան
ուրիշ վրայ չ'ընէ այդ պարագային, և
զիտանք թէ Բուսին թաթը ինչ գոյն
ունի մեզ Համար ալ:

Հայր Դարբուս փշուտը ընթացին
մէջ, հեռագրեալ կրցած է ձեռք բերել
առաւելութիւններ. Հակառակ զինքը ճն-
շող բռնապետութեանց, կրցած է միջոց-
ներ գտնել՝ բարոյական կապի Հաստա-
տելու բռնութեանց հետեւութեամբ ցը-
րուած իր գաւառներուն մէջ, կրցած է
մէկ կ'ընուի և մէկ Հայրենիքի և մէկ ազ-
գային եկեղեցիի ազատական և ուսմկա-
վար սկզբունքներու կորիզները պահպա-
նել, հարիւր հազարաւոր կորիզներու և
անմեզ գոհներու արեւներով. այժմ
յանձնուած են առնեք ներկայ սերուն-
դին ձեռքը: Ժամանակիս պահանջները
աւելի շատացած են, աւելի շատ առանձ-
նաշնորհուցներու և առաւելութեանց
պէտք ունինք՝ երկրիկ ապրելու Համար
մեր երկրին մէջ, և սակայն եղածներն
ալ ձեռքերնէս խնցիլն ու կուզեն խել:
Եւ դեռ ինչ շնորհներու կրպակն, կամ
ինչն է որ մեզ կը կուրցնէ, մեր ուշա-
գրութիւնը կը ցուէ: Լուսագոյն չէ՞ որ
վերջին Հայ անուրբ բոլորովին ջնջել
տանք պատմութեան ապագայի էջերէն
քան հոն ցուցնել տանք այդ անունով
փառաւոր և բազմաշարք անցեալ ու-
նեցող ազգի մը այլատերած մնացորդը,
ցանուցիր այս և այն օտար Հորիզոններու
տակ, ուր միլիոնաւորներու հաճոյքին Հա-
մար՝ անոնց գործարաններու նիւթական
և բարոյական փոշին կը կըլլեն:

Երկրաբանութիւնն է որ արմատական
* Հանգուցեալ Մարաշցի Մկրտիչ Կա-
թողիկոսը Մանիշակագոյն վեղար կը
գործածէ եղբր, ատոր Համար ալ կը հան-
դիմանուի Կեդր. վարչութիւնէն, ... սո-
վորական անուղղակի յանդիմանութիւն-
ներէն մին:

գործը պիտի տեսնէ, այդ կորուստները
ուրիշ միջոցով չ'են դարձանուիր:

Մատենարագէտ՝ չ'ընկելով նիւթէս
Կիրիկոսներուն ուշադրութիւնը կը հրա-
ւիրեմ ներկայ տագնապին վրայ, մատա-
նա թէ զիտակցութիւնը իրենց մէջ բա-
ւական զարգացած է և արգային եկե-
ղեցւոյ նուիրապետական Առաքելականք
միութիւնը Հաստատուն կը պահեն իրենց
կորուկ ձայնովը. և յամառութեամբ
Ազգային օրէնքներուն յետապնդելով:
Այսպէս է նաև բարը Հայոցս վիճակը
այսօր: Մշտական, խոհեմ, կազմակեր-
պեալ և միացեալ ուժեր վ կուրբ միայն
մեր առանձնաշնորհութիւնները մեզ կը
վերադարձնէ: Տալով նաև մեզ ազատ
ու երջանիկ՝ մեր երկրի մէջ ապրելու
իրաւունքը՝ ժամանակին պահանջած ա-
ռաւելութիւններովը:

ՄԱՇՈՒՅ ՎԱՐԴԱՊԵՏ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԷՆ

Ուրմի 1900 Ապրիլ 2.

Ուրմիայում մ'օտ մի դար բնակու-
թիւն են Հաստատել Լազարիտա Ֆրանսա-
ցիները, Ամերիկացի միսիոնարներ և Եպի-
սկոպոսներ, իսկ վերջին երեք տարիներու
ընթացքում Հաստատուեցան նաև Բու-
սական ու Գերմանական միսիոնարութիւն
ները որոց առաջինը իւր հզօր միջամե-
տութիւններով, և վերջինը իւր նիւթա-
կան անշաշիւ պարագաներով կուլ տա-
լու վրայ են մի դար Հաստատութիւն
ունեցողների պատրաստած ժողովուրդ-
ները: Զարմանալի է տեսնել այս միսի-
ոնարներու միմեանց Հակառակ գործե-
լու եղանակները, որոց առատ նուէրե-
րով ու խոտանումներով՝ պարտաւորում
են նիւթապէս ու ուսումնասցսյ մօտ 50000
Ատորները: Հայերը ամէն վայրերու սովո-
րութեան Համայնք միայն պաշտպա-
նութեան են փափագում, կամ աւել լաւ
է ասել կեանքի և ինչքի ապագայութեան
պէտքն ունին: որն արեւելուում են Բու-
սական միսիոնարութիւնէն. և որոյ Համար
էլ զանազան գաւառներէրց ու գիւղե-
րից գիւմուսներ արին անցեալ տարի, բայց
այս տարի քիչ սաւառ է այն ջերմ Համա
կրանքն որ ունէին առ ուսու առաքելու
թիւնը, աւելի ճիշտ ասած՝ սպասում
են դեռ շատերը, եթէ ուս գրուածնե-
րուն պաշտպանութիւն կուլ ինչպէս ի-
րենքն են ստում՝ ինքնօրէնութիւն, հող
և գիւղատերերից ազատ կացուցանելու
միջոցն շնորհուցեց ուսուցանանքուն, մին
սցեալքն էլ պիտի ուս գրուին առանց
մի վայրիկան ուշանալու: Ինչպէս նը-
շաններէրց էլ երևում է որ ուսուցանան-
քը չեն կեղեքում ոչ չափով ինչչափով
կեղեքում են ոչ ուսուցանանքուն: Պատ-
մում են թէ նորիկ դատաւորն էլ ուս-
սական միջամ ութեամբ պաշտօն է ըն-
դունել տեղայ, որն ծանօթ մի անձնաւոր
ութիւն է: Վանի Պարսկական նախկին
Հիւպատոսը Միլիտա Զօսէն իմանը, այժմ
«Իթիտովիտովիտ» բայց թէ պահէլ է սա
իւր նախկին Համակրանքն առ Հայ ժո-
ղովուրդը(՞): Այլատեսան Սրբազան ու
իմացեալ վարչապետ Դաւիթբեկ լաւ կա-
րող են դիտեալ նոցա առ այս անձնաւոր
ութիւնը կատարած Հերոսութիւններով
որին պաշտօնակն անկու և մօտ երկու
տարի անպատճով թափառել տայլու պատ
ճաւը դարձան Սայմասի քրիստոնէից
գաւառարութեան, որպէս զի իրենք ա-
ւելի չափով կեղեքէին ժողովուրդը: Այ-
ժմ իթիտալիտովիտ էլ եթէ ուսուց
գող մը բանելու լինի, արդէն խէրը տես
Ուրմիոյ քրիստոնէայ ազգաբնակիչներէրց:

Անգլիացի «Եպիսկոպոսական» առա-
քելութիւնը գրեթէ գործադու արել է:
Լուր կայ թէ պիտի թողուն Ուրմի ու
հեռանան, որովհետեւ ուսուցանանքի
մեծ մասը նոցա ժողովուրդներէրց էր:
Ֆրանսացի Լազարիտաները գործում են
աւելի ետանդով, իրենց տեղոյս քա-
րողները Հարաթիւրով շրջում են գիւ-
ղերում նման արթուն Հովիտներու: Հըս-
կում են իրենց ժողովուրդի վրայ և ուսում
նարաններին ուժ են տալիս: Անցեալներ
անձամբ այցելելի վերջիններու քաղա-
քումս բացած ուսումնարանին. մեր տե-
սայ մի աշխոյժ ու վտաւառն Բարսա-
ցի կըլը՝ որ դաս էր տալիս Ֆրանսերէն

Երկու չափերից, առօրինակից և թիւր-
բերից բարկացած մի կարգի, խօսում և
թարգմանում էր իւրաքանչիւր աշակեր-
տին իրենց լեզուներով, բոլորովին մա-
քուր ու հասկանալի ոճով, ինչպէս ա-
զած՝ մարդու նախանձն էր շարժում մա-
շակերտներին մեծամասնութիւնը Աստ-
րիններից էին ուր յաճախում են 30 ի չափ
հայ մանուկներ, մեծաւ մասամբ քա-
ղաքումս ուրիշ օրինաւոր ուսումնարան-
ներ չգտնուելու պատճառով, արդէն
հայոց ուսումնարանն փակ մնալն յայտ-
նել եմ ձեզ:

Սրանից 15 օր առաջ տեղս հասել էր
Նեստորական ասորացի մի եպիսկոպոս,
որն պաշտօն ունի ուսուցանող ասորիներ
ընդ կամ դեռ ոչ ուսուցանողներուն քա-
րողելու Մար Շիմոնի կողմից: Ողորմե-
լի՛ Մար Շիմոն, Ուրմիկի մինչեւ Գոշա-
նիս երկու աւուր ճանապարհ հազիւ լի-
նի, երեք տարուց յետոյ է արթնանում
եթէ այս արթնութիւնն էլ կատարեալ
համարութի, վասնզի Ուրմիկում չի մնա-
ցոր ոչ նեստորական եկեղեցի որ քա-
ղաք չը լինին ուսաներ: Դեռ անցեալ
աշունքին բռնի կերպով խորտակեցին
Գեօկ-Թափէի նեստորական եկեղեցւոյ
դուռը, և ինչդեռ յիշեալ գիւղում զեռ
կէսից աւելի էին նեստորականներ մնա-
ցել էին, սոմանց կողմանէ թէ և բողո-
քուցեալ սոյն ապրիլին վարմանց դէմ,
բայց ո՞վ է լսողը: Յաջողութիւն Մար-
Շիմոնի նուիրակին?

Այսօր իսկ լուր է պատում ժողո-
վաբոյ մէջ թէ օսմանեան կառավարու-
թիւնը ձերբարարել է Մար Շիմոնին և
Վան է տարել: Այժմ կարգը հասել է Ա-
սորիներին, որոնք ցայսօր ծաղրում են
հայերի ներկայ վիճակի վրայ, որոց կար-
ծիքով իրենք միայն են աշխարհիս ն-
րեւում ամենախիւս և ամենախելացի աղ-
բը:

ն. ԵՐ.

ՄԱՆԵՆԻՍԻՆ ԹԻ ՅԱՄՈՒԹԻ
ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Շարունակութիւն նախորդ թուէն
Տիրաւորակ Դաշնակցութեան կատա-
րած յայտարարի աղտարբեր փաթեթի-
նէ և յայտարարի փախուստն զրթնէ
չաքաթ մը վերջ Մէլրակցի Շէրէֆ պէ-
յը իւր կրած նախատիւնքին ի վրէժ սահ-
մանազիւրի (Արաբուլ լեռան ստորոտը)
հայ գիւղերը, Բապիւկ, Հըրպանկա և
նըղարավա գիւղերը կտորելին, կողոպ-
տելին և աւերելին վերջ, մի քանի հա-
րիւր ձիաւորներով 15 ժամ յառաջ կանց-
նէր մինչև Կոնք քաղաք և անկէ կէս
ժամ հեռուստիւնի միայն գտնուած
բազմապ Վառ գիւղը կողոպտելով և
77 ի չափ հայեր (մեծ մասամբ տղա-
յմեր) ինչու և 7 պարսիկներ սպանելով
յաղթական ետ կը վերադառնար, տա-
կաւնէ բորբոքած վրէժխնդրութեամբ
ամբողջ Մամասա երկար ժամանակ ահ
ու զոյղի մէջ պահելով օրհասին սպառ-
նալիքներով:

Անգին թուրք կառավարութիւնը կատա-
ղած, կարնէն ու Բաղէշէն տասն և ութ
գրուկ (թապուր) զօրք կը համարմբէր
Պարսկական սահմանազիւրի վրայ. «մին-
չեւ Դաւրէժ քըն», սպառնալով, եթէ
կըրէք ֆէշայիները? Ընդհանրելով ի-
քեզ չ'յանձնէր պարսիկ կառավարու-
թիւնը. որի քաղաքականութիւնը եղած
էր սկիզբէն ի վեր ուրախալ հայ յեղա-
փոխականներին և փախուստիւնների գոյա-
թիւնը իւր երկրի մէջ: Սակայն այս ան-
գամ ինչպէս կասեն, սոյն և մուրճի
մէջտեղն էր մնացեր, մէկ կողմէն թուրք
կառավարութեան ճնշումն ու սպառնա-
լիք, միւս կողմէն Շէրէֆ պէյի անձաբ-
ձակ սպառնալու թիւն, թալանն ու կո-
տորածը Մամասա և Սոյի գաւառներին
մէջ, Պարսիկ կառավարութեան պարտա-
ւորցուցին զինեալ թուրքի պահանջնե-
րին և այդ պարագային ամէն կերպով
զոհացում տալ սնոր:

Ույի թուրք հիւպատոսը Բիդա պէյ,
թագաժառանգէն աւելի գերակշիռ աղ-
ջեցողութիւն մը ունեցաւ Մամասաի մէջ
և պարսիկ դատաւորները (Հաքիմն ու
սէր փէրէտ) պարտաւորութեան տառն
հիւպատոսի խորհրդակցութեան և կամ-

քին ոչ ինչ չանել... :
Կաշախները ձերբակալելու հրաման
եղած և խոտել կը հետեւէին երբ արդէն
հայրենաւէր աւազակներ ի
(Դաշնակցական ֆէդայի???) ամենամեծ
մասը Արազէն կողմէն անցած էր ճա-
կատուաց, այս անգամ պարսկա-հայե-
րին պատճառած թշուառութեան դաբ-
նիներով հնարացած... : Պարսիկ Սար-
պազները և Ֆէրրաշները (զօրք ու ոստի-
կան) օր մը յաջողեցան 16 թէ 18 անգէն
«Ֆէդայի եր» ձերբակալել Սառնա գիւ-
ղի մէջ, որոնք այդիների հնձանների
մէջ պահուած էին: Ճարպիկ ֆէրրաշի մէկ
սուրոց բաւական կը լինի խաբել զանոնք
և թաքտանոցէն դուրս հանել, որոնք
յանկարծակիի գարով անձնատուր կը լի-
նին, աղատուելու և պաշտպանուելու
ամէն. միջոցներէ զուրկ, դէս ու դէն
վերջապէս յաջողեցան մի քանի անցա-
գիր ունեցող տաճակապատկներ, մի քա-
նի գաղթական Աղբակեցիներ և Մահլաճ
գիւղի «Արմէնիական» ուսուցիչը, որը
միայն մահուան դատապարտուած այդ
դէպքի թշուառ զոհն է այսօր վանի բան-
տի մէջ, հաւաքել բանտ լեցուցել, երբ
արդէն Մամասայիներին ասելով «Ազգա-
կերները ամէնքն ալ փախած էին: Մալ-
մաստի մէջ մնացած էին Բժիշկ Օհան-
եան. Սազօն, Երուսաղ Ղազարեան, Ա-
թենիկ, Թորոս և մի քանի ուրիշները,
որոնք կամայ կամայ քաղուելու կը պատ-
րաստուէին:

Յանկարծ գիւղեր մը Մամասայի բան-
տը ծակելով՝ բոլոր հայերը միասեղ
դուրս եկան ու փախան, ճանապարհին
իրենց ոտների կանտարներ (կոճղ. ծա-
կուած ահազին գերան) կտորտելով դէս
ու դէն ձգած ամէնք մէկէն Ղալասար
գիւղ բժիշկ Օհանեանի տունը կա-
պատանէին: Առաջու Պարսիկ կառավար-
ութիւնը կատարած, հայ գիւղերի մե-
ծերը կաշից և թնթանօթի բռնել սպառ-
նաց այն գիւղը որ պատասան տուած
լինի հայ կաշախներին և մի անգամայն
զանոնք բանտարկեց այլ ևս ֆէրրաշներին
թողնով անոնց ճակատագրը: տեղը չէ
նկարագրել պարսիկ կառավարութեան
տուած տանջանքների ձեւն ու եղանակը.
միայն սա բաւական է ասել որ, փայա-
ջուկցի Համբո անուն մէկը, որ վաղուց
կասկածելի էր յաջ կառավարութեան
իրեն կաշախ պահող, իրեն տրուած
չարաբանքին չ'զիմանալով, անմիջա-
պէս իր գիտցածը կը խոտովանի և կը
յայտնէ թէ Երուսաղ Ղազարեանի ձին
իրենց այտուի մէջն է. իսկ ինքը Մարգիս
(եթէ սխալ չեմ) Մէլիք Յակոբեաննեց
տունն է (Բաֆֆիի հօր եղբոր տուն) և թէ
Երուսաղ ուսուստանցի է: «Արաւանե-
ք» ինչ մասնակցած և փոխ հրամանատա-
րութեան պաշտօն վարած է ևայն ևն:
Ինչպէս ամէն ձերբակալուածների, այս-
պէս և Համբո կարցաքանութիւնները
Բիդա պէյի ներկայութեան կը կատա-
րուին, որի կողմէն կարճանապարհին օրը
օրին ամէնքն ալ:

Փայաջուկ գիւղը անմիջապէս կը
պաշարուի Մէլիք Յակոբեաննեց տուն կը
մտնեն ֆէրրաշներ և Երուսաղ Ղազար-
եան ձերբակալելով, ուրախութեան կը
մտնան վարի Սարկն ալ խուզարկել ուր
պահուած էր և Մազօն, որ անմիջապէս
ուրիշ տուն փոխադրուելով աղատուե-
ցաւ բարեբախտաբար: Իսկ ճամբան
թափփփած կանտարների կտորներէն
կառավարութիւնը կաշախների հետք
գտաւ և զննց պաշարեց Ղալասար ու
Բժիշկ Օհանեանի տունը: Բժիշկ Օհան-
եան Ռուսահպատակ էր. ընդդիմացաւ
Պարսիկ կառավարութեան և ինքն իրեն-
ներով պարտաստուեցաւ կռուել պարսիկ
սարպազների հետ: Թնթանօթիները ալ
տարուեցան և Պարսիկ կառավարութիւն
սպառնաց վճարականապէս կամ փախուստ
կանները պէտք է յանձնեն կամ թէ պի-
տի ուժակոծէ և որոշեալ ժամանակ
տուաւ: Երեք օր տեւեց այս սպառնա-
կան կացութիւնը, իսկզբան ուսուց
փոխ հիւպատոս Պ. Աւետիք Արզուման-
եան ջննաց պաշտպանէր, ինչիրը երբ
աւելի ծանրակշիռ հանցամանք մը ըս-
տացաւ, այլ եւս հեռագիրները սկսան
փոխանակուել Էմիր-Նիզամի (ատրպա-
տական նահանգապետ) Պետրովի (Դաւ-
րիժի ուսուց հիւպատոս) եւ կառավա-

րութեան միջև, որի վճարական ըսպառ-
նալիքը թէ պիտի ուժակոծէ այդ տունը
և նահանգապետի ազդու պահանջը պար-
տաւորացուց Պետրովը հեռագրելու Պ. Ա-
ւետիքի, որպէս զի Բժիշկ Օհանեան փա-
խուստականները յանձնէ հակառակ պա-
րագային ինքը պատասխանատու չէ:

Փախուստականների մեծ մասը, ի բաց
առեալ մի քանիները որ առաջուց դէս
ու դէն փախած էին, Պարսիկ կառավա-
րութեան յանձնեց բժիշկ Օհանեան, որը
արդէն Սանասորի փաթեթի զխա-
ւոր ջատագոյներէն և նոյն իսկ մասնակ-
ցողներէն մէկն էր: Այդ լաւ գիտեր
Պարսիկ կառավարութիւնը, որ արդէն
հարցուցած էր իրեն, գիտէին թուրք եւ
ուսու հիւպատոսները... : Թուրք հիւ-
պատոս այնչափ առաջ գնաց, որ վերջա-
պէս բժիշկ Օհանեան Սալմաստէն կան-
չուեցաւ Դաւրէժ, ուր Պետրով սիրալիւր
ընդունելութիւն մը ցոյց տալով իրեն,
Պարսկաստան մնալու անկարելիութիւնը
ցուցուց և Սանասորի մասին իւր գոհու-
նանկութիւնը յայտնեց ասելով՝ «Ահա-
այսպիսի բաներ արէք որ մենք ձեզ հա-
նիք...»: !!

(Շարունակելի)

ԶԱՒԵՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱՑ ՆԱՄԱԿԻՆ

Պարոն.
«Դաշնակցականաց Յիշատակարանէն»
Որոգորով շարք մը յօդուածներու շէմ
ուղղուած նամակը տեսայ:
Պատասխանելէ առաջ հարցունեմ թէ
դու անձամբ կը ճանչնաս այն մարդը,
որը պաշտպանելու յաւակնութեամբ՝
փաստաբանի մը օրիք առած են այդքան
յարտուն կերպով:
Մուծի մէջ, կեցող անունով և յեղա-
փոխականի գիմակին տակ խաշաղողու-
թեամբ ապրող անձանց անունները մեր-
կացունելուս նպատակն էր հայ ժողո-
վուրդին ծանօթացնել այն զիւրային շա-
հատակները՝ որոնք ազգը և աղբային
դատը անուրդի հանած՝ իրենց քստմնելի
զեղծուներով և ոճիրներով շայտ-
թեան ներքին ու էն վտանգաւոր թը-
նամիներն են:

Կը կրինեմ, այդ քու չճանչցած ու
պաշտպանած անձը Ղարամիշիքը Ա. Կար-
նոյ մէջ սուրբ գործի դրամէն 800 լիրա
գրպանեց. Բ. Սամուրի վաճառական ա-
նունս տակ 700 Ռուբլի իր կողորդն ան-
ցուց. Գ. «Միտթեմալանուց պետ Նեոլ-
քը մտնեց Ռուս կառավարութեան. Դ.
Կարնոյ մէջ սպանել տուաւ Չ Հայրենա-
պարտեցիները, փաստաբան Յարութիւն
էֆ. Տէր Սարգիսեան և վաճառական Սի-
մոն էֆ. Պողոսեան, Ե. իր կիրք խղճած է
— ու այդ մարդը Դաշնակցութեան հիմ-
նադիրներէն է: Այս յիշածս սոսկալի ո-
ճիրներու շէմ, որ նա գործածէ, փա-
տասցի հերքում կուզիմ, ո՞վ Դաշնակցու-
թեան աշնան վերջին ամուսնան ձագուկ:
Ես երբէք էլ միտթեմալանի արտաքու-
ած չեմ. Ա. ի առաջնորդութեամբ ալ
սիրալիւր հերքաւորութիւն գտած եմ:
Բնադատած եմ վեհապետ Հայրիկի գա-
լափարնը. ըսեր եմ թէ ներկայիս պա-
հանջները ըմբռնող մարդ չէ. սակայն
ձեր Սողոմ-աւանի հիմնադրին պէս քաւ-
լիցի, որ Հայրապետը «Մատնիչ դաւա-
ձան» և աւելի պղծալի անպահանջներով կո-
չած ըլլամ:

Կըսէք, «Ղարամիշիք թողուց ընդհա-
նուր նամակատան վերատեսչի պաշտօնը
և հեռացաւ...» ասոյէ աւելի լաւ չէ՞ր
ընէր, եթէ սերտէր «Հազար ու մէկ
գիւրները», և անկէ ամենէն աւելի գե-
րազանց բաները վերագրէր քո սեւ հո-
գի Մեղիքիդ: — Նամակատան մէջ նա-
մակ զատող մը 25 Ռուբլի գողնալուն
համար անկէ կը վճարուի, և այդ 25 Ռու-
բլի գողը այսօր ընդհանուր նամակա-
տան վերատեսչու կըլլայ? — Կըսէք
նաև, «Լեւոն իր նաւթի հորերը...» Ե-
րազին մէջ իսկ արեւօք տեսած ունի՞ նաւ
թի հորերը? ... : Կրնաք ձեզմէ գատ-
ուրիշ մէկն ալ գտնել որ հաւատարմ այդ
Շահմամալի եւսն բանաստեղծութեան: Ղա-
րամիշիքը ինք եթէ ձեր այդ տողերը
կարգալուր բարեբախտութիւնը ունենայ
թերեւս հաւատարմ ըսելով, «Կերեւի ես
նաւթի հորեր ունիմ եղեր ու չեմ գիտ-
ցեր, ...» ?

Ես քեզի խորհուրդ կուտամ որ ու-
րիշին գրածին տակ չստորագրես, ուրի-
շին պարանովը հորը չիղնես. չ'գիտցած
գործիդ մէջ չ'մտնես, թող տուր որ այդ
մարդիկը ինքն իրենց գոյնովը գուրս
գան և ինքզինքնին պաշտպանեն:

ԵԿԵՂԵՍ ԳՈՒՐԳԷՆ

Յ. Գ. Եթէ կուզէք ժէնեվի խմբա-
կինալ վարագոյրը բանանք:

Յառաջիկայ կիրակի Յունիս 3 Արժ.Տ.
Տ. Ղեռնգ վարդապետ Ս. Պատարազ
պիտի մատուցանէ Ս. Փ. Եկեղեցւոյ մէջ
«Եկեղեցւոյ մէկ կարեւոր աւանդութիւ-
նը» նիւթ ունենալով պիտի քարոզէ:

Երգեցողութիւնը կսկսի 9 1/2 ին և Ս.
Պատարազը 10 1/2 ին: Յետ աւարտման Ե-
կեղեցւոյ Չ. Ե. Բ. Ընկերութեան միջո-
ցաւ Կիրակոսեայ դպրոցը պիտի սկսի.
Կը հրաւիրուին բոլոր տղայ, աղջկուքն
և չափահասը:

Կիրակի երեկոյեան Ե. Ք. Ընկերու-
թեան անդամական ընդհանուր ժողովը
տեղի կուեննայ Ս. Փ. Եկեղեցւոյ մէջ
ժողովի նիւթն է «Պուք ալ գացէք այ-
գիւս մէջ գործեցէք» Արժ. Տ. Ղ. վար-
դապետ քանի մը բողոք խօսելէ վերջը
ժողովը պիտի ձգէ անդամոց:

Հոգաբարձութիւն

ՔԱՂԱՔԱՂԱԹ

ՌՈՒՍԻԱ

Ռուսիա անգամ միեւս կուգայ աշ-
խարհի քաղաքական հաւատքը իր դէմ
ցնցելու, և համոզուել թէ Ռուսիան
ոչ խօսքին, ոչ ալ դաշնագրին կը վըս-
տահուի:

Ռուսիա ճարտնի հետ որոշ դաշնա-
դրութիւն կնքած էր, որով իրենցմէ ոչ
մին առանց միւսին հաւանութիւնը ըս-
տանալու Բորիսի մէջ (Չինաստանի եւ
Ճարտնի մօտիկ թագաւորութիւն ունե-
ցող կղզիի մը) որ և գործողութիւն մը
պիտի կատարէր: Սակայն անցեալ շաբ-
թուս. օր մը՝ ոչ միայն Ճարտնի հաւա-
նութիւնը չառած՝ այլ առանց իսկ ա-
նոր գիտցունելու, Ռուսիա քրաւեց Բո-
րիսի ամենակարեւոր նաւահանգիստը:
Ռուսիա նաև միշտ յայտարարած էր թէ
իր գրաւած նաւահանգիստները բաց պի-
տի մնան աշխարհի վաճառականութեան
առջև. և ատեն մը քաղաքակիրթ աշ-
խարհը սկսած էր մտածել թէ Ռուսիա
փոխուէր սէր ալ հիմա անոր կարելի է
վտանգել: Հին դաւադրող, խարոզ եւ
ուխտադրուծ Ռուսիան չէ, սակայն այս
յուսախաբութիւնն ալ հիմն խախտուե-
ցաւ. զի նա յայտարարեց որ իւր այս գը-
րաւած նաւահանգիստը բաց չ'պիտի թո-
ղու:

Ուրեմն այս քաղաքական եղելութիւ-
նը նշանաւոր է աւելի այն երեւոյթովը
որ կուգայ աշխարհի սրտի մէջ Ռուսիոյ
մասին նոր կազմուել սկսած փոխա-
դարձ վտանգութեան ոգին խռովել եւ
անոր դէմ քաղաքական վերաբերմուն-
քի հիմնաքարը փոխել:

Ճարտնը այս պարագային պէտք էր
պատերազմ յայտարարել Ռուսիոյ. դէմ
յայտնի չէ թէ կարող պիտի ըլլայ կամ
ոչ, քանի որ իր ամենէն մեծ կոնսիլը
Անգլիա, անգլի կաշկանդուած է:

ԱՆԳԼԻԱ

Անգամ մի ըսինք թէ Լորտ Սպարը-
րի վերջերս խօսած մէկ ճառը խիստ
վրդովիչ էր. մօտալուտ և ահարկու վը-
տանգի մը առջև կեցած՝ կաղաքարէր
ամբողջ անգլիական ժողովուրդին որ
մէն ոք զինաձգութեան հետամուտ լինե-
լով պատրաստուել հայրենեաց պաշտ-
պանութեան համար զէնք վերցունելու
օր մը: Անկէ ետք Անգլ. ուրիշ նըշա-
ւոր Զօրապետ մը շատ աւելի բաց ու ո-
րոշ կերպով նոյն միտքը յայտնեց: Նախ
թէ: Անգլիա իր պէտքերուն համահաւաս-
ար լրանակ մը հանելու բաւական չէ.
Երկրորդ թէ. մեծ վտանգ մը կը մօտե-
նայ Անգլիոյ անմիջական դրան մօտիկը
և այն ալ խիստ կարճ ժամանակէն. եր-
րորդ թէ ամէն անգլիացի այդ վտան-
գին դիմագրաւելու պատրաստ կենա-
լու է:

Այս վրդովիչ ազգարարութիւններուն վրայ կարեւոր լրագրիները զանազան կարծիքներ կը յայտնեն...

Անգլիոյ ընտրութեանց ժամանակը կը մտնենայ... կրտսերները միայն որ լորտ Բօպերթի կացութիւնը շատ աւելի որոշուած պայմաններու մէջ վրայ դրուի...

Տարածայնութիւն մը կայ թէ լորտ Բօպերթի (նախկին ազատական նախարարացեալ) և Մը. Չէյմպրէյն (ներկայ գաղթային նախարարը) համաձայնած են ընտրութեանց անկէ ձեռք ձեռք տուած չորսընէ... նպատակ ունենալով որ ներկայ «Փոքր ազատականութիւն» կոչուած կուսակցութիւնը էտք եղածին պէս մեն ու զօրաւոր հանդիսացունեն, եւ այդ պարագային Մը. Չէյմպրէյն նախարարացեալ ըլլայ...

ՊԱՏԵՐԱԶՄ

Հարաւ Աֆրիկէի պատերազմը վերջանալու վրայ կը համարուի:

Լորտ Բօպերթի Փրեթորիաի դուռը կը բարձրէ... Զօր. Բօպերթի քաղաքէն ներսէն ժամ հեռավորութեան վրայ կը կենայ և թէ քաղաքապետութիւնը մասնաւոր պատրաստութիւններ տեսած է յաղթական բանակը պատրուով ընդունելու: Այս առթիւ պիտի ազատուին անգլիական զերեւալ զօրքերը 4000 էն աւելի, իրենց 177 սպաներովը:

Ազատ նահանգներու բոլոր զօրքերը զինաթափ եղած եւ իրենց տունները վերադարձնելու են: Պօէր բանակը լքուած վիճակ մը ունի: Պատերազմը շարունակելու միայն մէկ հաւանական միջոց կերեւնայ, այն է Պօէր բանակը խուճրուելու քաճիկ և աստի ու անդին կորիլա-պէնտի վերածուած՝ իր բական կռիւներ մղել:

Լորտ Բօպերթի այս խիստ կարճ ժամանակամիջոցի մէջ կատարած յաջողութիւնները, որ տարիներու գործ կը համարուէր, Անգլ. զինուց յաւիտենական փառաց մէկ գերազանց մասը պիտի կազմեն:

ԳՈՐԾԻ ԱՂԷԿ ՊԱՏԵՆՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Կը յայտարարեմ յարգոյ հայրենակցացոս որ իմ ընտանիքը քաղաքի ընտանիքի մէջ ընկնելու 39 թիւ պիտի որոնուի գործարարներ մէջ ունենցած 1մէկ ութերորդ ռաժի նըս կը վաճառեմ երկիր երթալու ստիպուով աճան գնելու կրնամ տալ փապա ճողք կրնան զիմեղ հետեւեալ հասցէին: Կարապետ. Թորիկեան Թամա Պուլտիկ, մէյն փողոց Միլֆորտ մէս

ԳՈՐԾԻ ՊԱՏԵՆՆՈՒԹԻՒՆ

Ամերիկեան Կրօնքի և Պրէքըր շափ-խանութիւնը կը ծախեմ, ուրիշ երկիր մեկ ներու պատճառաւ, որպէսզի գնելու ուզող զը գործին վրայ ճիշդ և ճիշդ գաղափար կազմէ, շարաթ մը իրեն պատեհութիւն կը տրուի խանութի մէջ կենանու և ամէն բանը հասկնալու որ աստեան անձամբ պիտի իմանայ գործին ինչ շահաւոր ըլլալը:

194 Պրէքըրֆիլ Ըսթրիտ Չարլըսթաուն Օհան Այվազեան

ԱՉԴ ԸՆՏՐԻ ՊՈՒԼՂՈՒՐ

Ուսուցիչ մէջ երկար տարիներէ ի վեր հաստատուած ենք մեր յատուկ պատրաստութեամբ: Սոյն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենալաւ ցորենէ կը պատրաստենք ընտիր պաշտպանութիւնները: Սոյն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենալաւ ցորենէ կը պատրաստենք ընտիր պաշտպանութիւնները: Սոյն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենալաւ ցորենէ կը պատրաստենք ընտիր պաշտպանութիւնները:

Ուսուցիչ ամեն ով որ կուզէ ընտիր և արտօմազամ կերակուր լինելու պատրաստ է ծեծած ունենալ: Թող զիմէ ուղղակի մեղ: Ազգայնականները փութով կը կատարուին: Դանիալաւ տեղեկութեանց համար պէտք է զիմեղ հետեւ հասցէին: Ուսուցիչ, Պուլտիկ Միլֆորտ Մասս. 151 ի. նիւնսթ. Ուսուցիչ Մասս. Տաճկանի տեսակ տեսակ սպանդներն ու կրծիները:

ՄԵՐ ՎԱՃԱՌԱՆՈՑ ՁԵՌՔԷ ԾԱՅԵԼՈՒ ԵՒ ԱՃՈՒՐԻԻ (ՕՔՇԸՆ)

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՍՐԱՊԵԱՆ 151 ՄԵՅՆ ԸՍԹՐԻԹ Ուսուցիչ Մասս

Մենք կը գնենք և կը ծախենք տնական ամէն կարգի կահք և գոյք (Ֆրիշ-շուր) նոր կահ չին:

Մենք ամէն միջոց ունինք մեր մասնաւոր մեր հայ յաճախորդները գոհացուցելու թէ պարանքին լաւութիւնով և թէ գնոյն տեսնութիւնով:

Դիւրութեան համար ապահովի դիւրութիւն ալ հաստատուելուք: մէկ շոր-բորքը կանխիկ մնացեալը ամսավճարով: Ամէն երկու շաբաթի առատութեամբ 10 1/2 էն և շաբաթ կէս օրին ժամը 2 էն ետք աճուրդ (օքշըն) ունինք:

Դրի քաղաքներու ապագանքը շուտով ու ճշտութեամբ կը կատարենք:

ԿԱՐԱՊԵՏ Գ. ՓԱՊԱՉԵԱՆ

NEW YORK LIFE INSURANCE CO.

ՆԻՒՆՈՐԻ ԿԵՆՆՈՑ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գործակալութիւնը ըստանձնած է, և անձամբ կամ նամակաւ իրեն զիմողները կապահովագրէ ճիշդ և ուղիղ պայմաններով:

Նիւ Եօքը կենաց ապահովագրական Ընկերութիւնը աշխարհի ամենէն մեծ միջոցային ապահովագրական ընկերութիւնն է, 82 կառավարութեան ճանչցուած և անոնց Օրէնքներով վաւերացուած:

Այս նիւթին վրայ պատրաստած եմ համառօտ տեսքով մը զօր կը լրկեմ ամեն անոնց, որոնք կը շահագրգռուին այս խնդրով և կը փափաքեն որոշ տեղեկութիւններ ստանալ:

G. H. Papazian, 15 Temple Place, Boston, Mass.

THOMAJANIAN BROTHERS,

52 Southbridge St., Worcester, Mass.

Ամերիկայի հայ գաղթականութեան կուսակցութեան յայտարարելով, ամէն դիւրութիւն կը ընծայենք նաեւ տնտեսական տարու մասին: զգալի թուրքիս կամ եւրոպայ. մասնաւորապէս կը յանձնարարեմք (Ֆրէնչ Լայն) կուսուց զիմն որ ամենապատուական և ամենաարագ նաեւ ունենի և ամէն հիշգրտութի առաւօտեան ժամը 10 ին ճամբայ կենին Նիւ-Եօքըն:

Դրամ կը փոխադրենք Մարսել հեռագրութեամբ և նոյնպէս եւրոպայի բոլոր գլխաւոր քաղաքաց մէջ: որք կը գանձուին առանց որ և ծախուց և դժուարութեանց մեր տան ապահովութեան մասին հայրենակիցք արգէն տեղեկ են, անցեալ 10 տարուան մեր ընթացքն են: նաև կենաց, վերաբորեւու, ամենամեծ լաւ ընկերութեանց գործակալութիւնը ըստանցեմք եմք: ստոր համար այ օտարներու զիմելէ առաջ մեզի զիմեցէք: նամակներու պատասխանները մեր անմիջական ուղարկութեանց կուսուց ինչպէս սովորութիւնն է:

Զգուստվածառ ԵՂԱՐԻ ԹՈՎՄԱՆԱՆԵԱՆ 52 Սաւաթի Պրիմ. Փողոց Ուսուցիչ Մասս

ԲԱՅՅԻՒ

«ԴԱԻԹ-ԲԷԿ» Ա. Բ. Վ. Հատոր վերջարանով և «ԿԱՅՄԵՐ» Բ. Հատոր լրատար:

Իւրաքանչիւր ըստանորդակին է 5 Երկին:

Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս կուղարկուին ըստանորդակին որպէս «ՍԱՄՈՒԷԼ» եղաւ:

Բաֆֆիի միւս երկերը ունենալ ցանկացողները պիտի ուղղակի գրին մեզ: Մեզնից կարելի է ստանալ նաև Պրիմեան Հայրիկի, Երեւնի, Պարոս Դուրեանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ: Հասցէ:

MME. RAFFI, 47 Uxbridge Road, London, W., England.

ԿՈՒՉԷՔ ԴՐԱՄ ՓՈՆՍՏՐԵԼ ԴԻՄԵՅԷՔ ԱՆ՝

Սարգիս Գ. Սարաֆեան 1060 Փ. Օ. Պօքս, Ուսուցիչ, Մասս.

Դրամ կը փոխադրենք Թիւրքիոյ բոլոր քաղաքները: Կեդրոնապահին է Պարբերք, Տեւր Յովհաննէս Պարբերքեան, որ երկար տարիներու գործունէութեամբ և վարկով հանրածանօթ է և Կ. Պօլիս Տ. Գէորգ Պարբերքեան: Մեր Գործակալներն են: Մայրթեա Սարգիս Պօշուգլեան, Չմէկաճակ՝ Մէլիկէյր Ինճէյ-Եան. Բալու. Գարեգին Բիւրճեան. Չեքուշ՝ Յակոբ Տաղաթիկեան: Թիւրքիոյ ուրիշ բոլոր քաղաքներն ալ դրամ կը փոխադրենք Պարբերքի միջոցաւ:

Մարտիլ թէ հեռագրով եւ թէ նամակով դրամ կը փոխադրենք և նաւթի տոմսակներ կուսանք:

Ուսուցիչ մէջ կը փաճառենք պամեան սրկարի թուրքի և ուրիշ շատ տեսակ Տաճկական ապրանքներ:

Պանութիւն Հասցէն է՝ 14 1/2 Արշ Սթ. Ուսուցիչ, Մասս.

ՈՒՇԱՒՐՈՒԹԻՒՆ. — Մեղ դրամ լրկելու է Մընի Օրտորով, կամ Պանքայի չէքով:

ԴՐԱՄ ԿԸ ՓՈՆՍՏՐԵԼ

Ամերիկայի հայ գաղթականութեան կուսակցութեան յայտարարելով որ հայրենիք դրամ փոխադրելու դիւրութիւն ընծայելու համար, փոխադրի նոր գործով սկսած եմ ի Պօսթօն՝ շատ մը բարեկաններու ու ծանօթ հայրենակիցներու թախանձանց քայացում տալու. աւելորդ է ոչինչ գովեստներ ընել Պարբերքի ինչպէս նաև Տիգրանակերտի մէջ հաստատուած Պէրպէրեան երազց տան վարկին ու վստայութեան նկատմամբ: Ինչ որ արգէն երկար տարիներէ ի վեր կը վաճառեն, պէտք եղած վստայութիւնն ու վարկը գործի հրատարակի վրայ: Գործը պիտի հաստատուի ու վճարվի զայն, և այս համարակալութեան կերպով ստորմասնակցութեան անոնց, որք կուզեն Փ. Գրի գործին ճշտ: Սթ. Լ. § 450 էն կուսուցք:

Մասնաւոր գործակալներու ունինք Պարբերք, Մայրթեա, Տիգրանակերտ, Սեբաստիա, Հալէպ, Կ. Պօլիս և Մարսիլիա ինչպէս ուրիշ այլ և այլ քաղաքներ: Մարսիլիայէն եկողներու գրամի և այլ պէտքերու մասին խնամք և դիւրութեան միջոցներ կը ընծայենք: Հայաշատ քաղաքներու դիւրութիւն ընծայելու համար երկու գործակալներու կը նշանակեմ որոնց կրնան զիմել: — Ուսուցիչ: Պ. Գրիգոր Մարգարեան. 157 Սթ. Սթ. Նիւ Եօքըն և Նիւ Չըքի Պ. Մարտիոս Թաճկեան 251 Ուիլմ Սթ. Նիւ Եօքըն

Ինձ նամակ և դրամ զիմողներ պէտք է հետեւեալ հասցէով թղթակցին՝ P. O. Box 2652. Իսկ զիս անձամբ տեսնել ուզողներ կրնան զիմել՝ 344 Cambridge St., Boston, Mass. 8ՈՎՂ. Մ. Պէրպէրեան

ԱՉԴ

Կը ծանուցանենք Հայ հասարակութեան թէ՛ Պատիւնի Թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏՐ ԵՊԱՐԵՂԵՆԵՐ ՉԱՓԱՌՈՐ ԳՆԵՐՈՎ:

Յանձնարարութիւնք կը կատարուին փութով և խնամով: ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԱՐԱՍ ՍՄԻՆԱՍՅԱՆ

Մեր Հասցէն է Tyler Grocery Co. 113 Tyler St. Boston Mass.

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ


Պօլսոյ, Վենետիկի, Մ. Մամուրեանի և Տիգրիս Բաֆֆիի հետ մասնաւոր կարգադրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատուներէ ալ գրքեր բերել տալու միջոցները ձեռք բերած ըլլալով կուսուց գրատու հայրենակիցներու ծանուցանել թէ իրենց փափաքած գրքերը սովորական գնով կարճ ժամանակով մը մէջ՝ բերել տալու պատրաստ եմ: քիչ ժամանակ վերջը մեր քով արգէն պահեստի պիտի ունենանք ամէն ժողովրդական գրեանց շաբաթը: Փափաքողք գրացուցակ կը լրբիենք: Մեծ քանակութեամբ գրեանքներու մասնաւոր զեղջ կընենք:

Դիմել Ս. ՊԵՏՐՈՅԵԱՆ 390 P O Box LOWELL, MASS

ԱՆ Ա Հ Ի Տ

Հանգէս Աղապիս, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բրդ. տարուայ Բաժանորդագրութիւնը:

Հասցէ ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ 6 Բլէս Տը Լ'Օտէօն Բարիկ



Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Մ Ե Ր Ե Մ Ե Ա Ն Ա Ե Ե Ռ Փ Ռ Բ Ա Ր Ա Վ Ա Ն Ա Ս Ս Մ Պ ՈՒ Ր Ա Ճ Ե Ա Ն

Նիւ-Եօքը 509 2 րդ. Ալիսո

Տեղական և Արեւելեան բազմաթիւ սակ նպարեղները, լաւագոյն տեսակ ընդեղները, եղանակին համեմատ բանջարեղները և սուրճայ թարմ միս: Հայրական պանիր փառուցող 12 սէնթ, մեծաքանակ գնողաց 10 սէնթ: Ուսուցիչ պատուական Պղլուր և Մեծած փառուցող 3 սէնթ:

Ձիթապտուղ (զէյթուն) փառուցող 10 ս. մեծաքանակ գնողաց մասնաւոր զեղջ կընեմ, 5 փառուցող քէն սալայ հատը 25 սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հատը: Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամեն տեսակ ապրանքներ, ա՛յլ զը գրուած ետիրաղ, ընտիր կորկոս, անթափ հալիսափ, կաստիչ զէյթուն. Չէյթուն եռլի (ընտիր տեսակէն) մա՛քառնի լօքում տեսակներովը, ոսպ աղցուած կամ շաղցուած, սուճախ, սիսեռ Պօլսոյ խաչար պանիր, լէպլէպի շաբա՛րի տեսակներով. զիմիս, անասն, պատ՛ տուական խուճի. աղւոր պիւրէ հաց՝ 2 հատը 5 սէնթ, և այլն... Նամակով ե՛րցած յանձնարարութիւնք փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր յատուկ կառքով: վճարու մեքը կանխիկ են և ոչ սպառիկ:

Նաև կը ծախեմ Գամիսա, ինչպիսիքի Պատրիս և Սուճուղ:

ԿԱՐԻՈՐ ԱՉԴ

Ճաշակի յարմար պատուական ապուխտ (Պայսերի Պատրիս) կը պատրաստեմ, գինն է՝ փառուցող 35 սէնթ. վաճառման կեդրոնապահըն:

S. ՍԷՄԷՐՃԵԱՆ 113 TYLER ST BOSTON MASS